

ՄԵԼԻԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարեկան 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից համադրություն մեջ:

Ստամբուլից գրվում են ուղղակի
Խաֆաթ. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիտով:

Յայտարարութիւնների համար գնում է
իրարանցիւր թուին 2 կոպեկ:

Մ Ե Մ Կ

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵՒԻ Է ԳՐԱԿԵԼ

Կ Ե Ս Տ Ա Ր Ո Վ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881
թվի, մինչև յուլիսի 1-ը 1882 թվի:

Բաժանորդութեան գինը 6 րուբլ է:
Կրկնու համար պէտք է ուղղակի գիմել
խմբագրութեանը հետևեալ հասցեով. Խաֆ-
աթ, редакция «Мшак»:

ԲՈՎԱՆԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Այժմ ինչ է յայտնում.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
համակ Ախալցխայից, համակ Ս. Պետերբուրգից,
համակ խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՐԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. «ГОЛОСЪ» լրագրի թղթակցու-
թիւն: Պոլսոյ գաղտնի: Արտաքին լուրեր.— ՅԱՅՏԱՆ
ԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻ կարե-
ւոր բացատրութիւն:

ԱՅԺՄ ԻՆՉ Է ՅԱՅՏՆՎՈՒՄ

Քամոյեանց եկեղեցու գործը բարձրաց-
րել է վարագործի մի ծայր որ ծածկված
էր Մակար եպիսկոպոսի գործունէութեան
վրա նրա այստեղ առաջնորդ եղած ժամա-
նակ, այն վարագործը որ այդքան խնամքով
աշխատում էին ծածկված պահել նրա կու-
սակիցները, որպէս զի նրա առաջնորդ եղած
ժամանակ աւելի միջոց տան նրան օգտվե-
լու ազգի փողերից եւ գուցէ իրանք շահվեն,
իսկ նրա այստեղից գնալուց յետոյ պահ-
պանեն նրա հեղինակութիւնը ամբողջ մէջ
որպէս զի ժամանակով, ով գիտէ, միջոց
տան նրան եւ իրանց աւելի բարձր տեղի եւ
աւելի լայն ասպարէզի վրա նոյնն անելու:

Շարուրովի գործը Մակար եպիսկոպոսի
առած անխառնութիւններից ամենաազգի
ընկերոջն է, որովհետեւ տունը եւ գետինը

գտնվում է քաղաքիս կենտրոնում: Բայց ո՞վ
գիտէ թէ որքան այդ տեսակ գործեր կա-
տարեց նոյն Մակարը, որոնք դեռ եւս մը-
նում են անյայտութեան մէջ եւ հետզհետեւ
կը յայտնվեն:

Մի եկեղեցական գետին քաղաքի կենտ-
րոնի ամենագեղեցիկ տեղում, փոխարքայի
պալատի առջեւ, Կօրցովի փողոցի անկիւ-
նում, մի գետին, որի իւրաքանչիւր քառա-
կուսի սաժէնը արժէ ամենաքիչը 300 րուբլ
եւ որ պարունակում է իր մէջ 200 սաժէն,
տրվում է Շարուրովին տան եւ երկու տա-
րի ժամանակով, որ սա աներ կառուցանի
այդ գետնի վրա, տարեկան երեք, չորս
հազար րուբլ եկամուտ ստանայ, իսկ եկե-
ղեցուն վճարի տարեկան 100 րուբլ միայն:
Մի եւ նոյն ժամանակ, տան եւ երկու տա-
րի անցնելուց յետոյ Շարուրովին պայմանա-
գրի գործութեամբ թող է տրվում նորից
նոյն պայմաններով պայման կապել եկեղե-
ցու հետ, դարձեալ 12 տարով, իսկ այդ
ժամանակամիջոցի անցնելուց յետոյ, դար-
ձեալ թող է տրվում նրան վերանորոգել
պայմանագիրը դարձեալ 12 տարով: Շարու-
րով իրաւունք է ստանում գրաւ դնել, ծա-
խել իր շինած աները կամ եկեղեցու կամ
այլ անձանց վրա: Այդ բաւական չէ. իրաւ-
ունքը մնում է եւ Շարուրովի ժառանգնե-
րին:

Այժմ ինքն իրան հարց է դրվում. ի՞նչ
շարժառիթներ կարող էին ստիպել Մա-
կարին այդ տեսակ պայման կապելու եկե-
ղեցու օգուտի մասին խօսելը այդտեղ ծի-
ծաղելի կը լինէր, քանի որ եկեղեցին տա-
րիների ընթացքում պէտք է ստանար տա-
րեկան 100 րուբլ միայն: Մնում են միմյան
երկու ենթադրութիւններ. կամ Մակար ե-
պիսկոպոսը շատ էր հոգում Շարուրովի եւ
նրա ընտանիքի մասին եւ կամենում էր նը-

րան բարերարութիւն անել եկեղեցական
քաղաքի,—որ հազիւ թէ ընդունելի է, կամ
ինքն շահ ունէր այդ անձոնի պայմանից,
հոգալով աւելի անձնական օգուտների մա-
սին, քան թէ եկեղեցու շահերի մասին:

Նշանաւոր է որ նոյն անձինք, որոնք
միշտ անխնայ յարձակվում էին մեզ վրա,
երբ մենք Մակարի օրով քննադատում էինք
նրա գործունէութիւնը, նոյն անձինք որոնք
Մակարին Թիֆլիսից ծանապարհ գցելու ժա-
մանակ անխնայաբար օգտագործեցին արեւելի
նրան, բացարձակ յայտնելով նրան որ յոյս
ունեն մի օր տեսնել նրան կաթողիկոսական
աթոռի վրա, որոնք գումարներ հաւաքեցին
եւ նրա անունով Կայանեան օրհորդաց զբա-
րոցում ստիպեցին հաստատեցին,—նոյն
մարդիկ յուլիսի 29-ին առաջնորդարանում
կայացած ժողովի մէջ ապշած մնացին: Նը-
րանց առջեւ բացվեց տարիներով ծածկված
մնացած փարագործը եւ նրանք տեսնե-
լով ի՞նչ անդունդի առջեւ էին կանգնած:
Իսկ նրանք, որոնք Մակարին պաշտպանում
էին, որովհետեւ նրա շահվելուց իրանք էլ
շահվում էին, բոլորովին չեկան ժողով:

Քամոյեանց եկեղեցու գործը անշուշտ
շատ ուրիշ գործեր մեզ կը բաց անի, մի
եւ նոյն ժամանակ հասարակութեան աչքե-
րը կը բաց անի այն մարդկանց գործունե-
ութեան վրա, որոնք Մակարի ցիւրմ, եւ-
րոպայ կուսակիցներ լինելով, պղտոր քրու-
մուկ էին որսում, եւ որոնք մարդ չը գիտէ
թէ որտեղից, ամենքն էլ քիչ թէ շատ կա-
թողութեան տէր դարձան:

Բացի կոմիսիայից, որ կազմվեցաւ Շարու-
րովի գործը քննելու համար, մենք առա-
ջարկում ենք որ կազմվի հասարակութեան
միջոց մի այլ կոմիտէ Մակար եպիսկոպոսի
առաջնորդութեան ժամանակ կատարված
բոլոր ազգային եւ եկեղեցական գործերը

քննելու, բեկիզիա անելու համար: Մենք
այդ կառաջարկները եւ կը պահանջենք կը
այժմեան կոմիտէին կը ներկայացնեն իր գե-
կուցումը, եթէ մինչեւ այն ժամանակ Մա-
րէն նորից չը ժողովի հասարակութիւնը եւ
չը կատարի մեր պահանջը յատկապէս այդ
տեսակ յանձնաժողով ընտրել տալու վերա-
բերութեամբ:

Մի եւ նոյն ժամանակ ամենքը գիտեն, որ
Շարուրովի կառուցած մի յարկանի շինու-
թիւնը, որից նա 4000 րուբլ տարեկան ե-
կամուտ է ստանում, միայն այն պատճառով
որ գետինը, որի վրա նա կառուցեց է ան-
գին գետին է, ինքն այն աստիճան թեթեւ
անհիմն, խախուտ եւ քիչ արժեքող շինու-
թիւն է, որ եկեղեցին շատ հեշտութեամբ
կարող էր իր սեփական փողով կառուցանել
նրան, եւ եթէ միջոց էլ չունէր, կարող էր
վերջապէս փոխարինարար մի անշան գու-
մար վեր տանել այդ գործի համար, փո-
խանակ, ամբողջ օգուտը մի մասնաւոր մար-
դուն թողնելու եւ տարեկան միայն 100
րուբլ ստանալու տանեակ տարիների ըն-
թացքում:

Եթէ Մակարը ազգային շահերը չը ծա-
խէր իր սեփական շահերի համար, երեւի
մի յայտնի գումար ընդունելով Շարուրովից,
որպէս զի գործի ի վնաս եկեղեցական շա-
հերի,—այս րոպէիս Քամոյեանց եկեղեցին
տարեկան չորս հազար րուբլ եկամուտ կու-
նենար եւ կարող էր մի ծխական դպրոց էլ
պահել իր գաւթում:

Ոչինչ բան չը կայ որ ժամանակով չը
յայտնվի ժամանակով կը յայտնվի թէ
ու՞մ հետ էր բաժանում Մակար եպիսկոպո-
սը իր ստացած կաշառքները, որպէս զի
այդ անձինք լուեն նրա արած զեղծութիւնի
մասին:

Գ. Ա.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Երկու ամիս կայ, մի օր Միացեալ ընկերու-
թեանց երեսփոխանական ժողովին գիմեցինք
ասելով.

«Պարոններ, նպատակն որպէս եւ գովելի լինի,
ձեր ուղղութեան կատարեալ համաձայն չեմք:
Ազգի իրաւունք ունի մեծ բարիքներ անկախ
այս ընկերութենէն: Գուցէ ըստ բաւական ու-
սումնասիրած չէք երկիր մեր գաւառացուց էա-
կան եւ անմիջական պէտքերն: Ըստ մեզ սոսկ
մտաւորական կրթութիւնն չէ այս ժամուս Հա-
յաստանի ժողովրդեան անհրաժեշտ պէտքն:
Լաւ կը լինի որքան եթէ բարեկիցութիւնը ձեր
նպատակն առանց ուսման ծաւալուն մէկ
կողմ ձգելու: Ժողովը թէ Հայաստանի տնտեսու-
կան բարեօրոգման նպատակն բան զայն առաւել
ստիպողական է»:

Նոյն միջոցին մի պարբերական հանդէսի մէջ
գրեցին.

«Ընտանորութիւնն աստուծոյ մի առաձգական
բաւ է, եւ մի ազգ սոսկ ընթերցմամբ եւ գրա-
գիտութեամբ չէ որ կը լուսաւորուի: Ուսմանը
յաւաճ մեր ազգն հացի կարօտութիւն ունի:
Պէտք է որքան որ ամեն գաւառացի հայ իր տե-

ղական պիտոյից յարմար եղանակաւ կրթուի,
որպէս զի նրա իրական զարգացմամբ նա կարող
լինի նախ տիրել բարոյապէս գինքն չըջապա-
տող ցեղերու վերայ: Եթէ նորա նրա իրական վի-
ճակն փոքր ինչ բարեօրոգման, նա այլ եւս մեզ պէտք
չունի իր զարգացման կառավարելու համար:
Հետեւեալ գործող մարմիններն պարտաւորու-
թիւն ունին նախ խրատելու գաւառաց տնտե-
սական ձեռնարկութիւններն եւ զայն բարեօր-
ոգման միջոցներուն վերայ մտածելու»:

Միացեալ ընկերութիւնն վերջնական կերպով
չը մերժեց այս առաջարկութիւնն: Ժամանակ
ուղեց խորհելու: Բայց ընկերութեանն զօրս
բացադաժնութիւններ սկսան լսուիլ: Նոյն օրէն
Լոնդոնի ընկերութիւնն եւ բողոք անակնկալ չէին մեզի
համար: Մեր առաջարկութիւնն կարծես մի ան-
մարտելի նորութիւն կերտար եւ բոլորովին հա-
կառակ այն սկզբանքը՝ զորս մինչեւ այն ատեն
իր աներկրայելի ճամբարութիւնը ըմբռնած էին
շատերն:

Երկուսն, ասացին ոմանք, միմեք մի օք կա-
րող է որքանալ թէ «Լոյսն» եւ «գիտութիւնն»
ամեն բարեօրոգման միակ աղբիւրն է: Միմեք այդ պա-
րունն չը գիտէր որ ամեն եւրոպական ազգեր,
չին եւ նոր, հիւսիսային թէ հարաւային, ի շնոր-
հիւս ուսման գտած են իւրեանց բարօրութիւնն:
Միմեք նա չէ կարողացած այս ինչ հեղինակն որ
կտուէ— «Կուզես անօթի չը մնալ, ուսմանը
ստիպել»: Միմեք չէ լսած այս ինչ անձնա՛ փի-
լիսոփային խօսքն, որով կը հատուտ թէ ուս-
մանը եւ գիտութիւնը միայն կարող են երջանիկ

անել զմարդ: Միմեք կարելի է մեզ կէտ առ կէտ
չօրհնակել ինչ որ Եւրոպայի մեծ ազգերն կը
գործեն: Ի՞նչպէս հար է նոյն աստիճանին
բարձրանալ եթէ նրանց զմեզ շաղկաւ ճշգու-
թեամբ չը հետեւին: Թող տուէք որքան այդ
ընկերութեան «Լոյս» արեւը ազգին մէջ, թող
տուէք մեզ առողջ, առաքելն եւ հմուտ մի սե-
րունդ պատրաստել: Մեք եւս անդուն երկուս-
տեղներ եմք որ ձեր երեւան գալն շատ յուսա-
յաւերեկ դիտած եմք այն վիճակը յորում կը
գտնուի մեր հայրենիքն, եւ մեք պիտի ջանամք,
որքան կարելի, այդ վիճակը ազատել զայն սոսկ
մտաւորական կրթութիւնն տալով, յորմէ հետ
ամեն բան կարելի է ձեռք բերել: Թէ որ գուցէ
անտեսական ուղղութեան կողմնակից էք, եթէ
լաւ համոզուած էք թէ այս ուղղութեան մէջ
կարող եմք օգտուէտ կերպով աշխատել, սխալ
գուցէ զարկեր էք, ձեր փնտռածն ուրիշ
տեղ է»:

Պննդեմք:

Ի՞նչ կը նշանակեն յեւրոպայ արհեստ եւ գի-
տութիւն, կամ ինչ եղել են ի սկզբանէ անտի-
սոցա յարակցութիւններն:

Ամեն եւրոպական ժողովուրդ, երբ իրեն ազգ
զոյութիւնն ունենալ սկսել է, նախ երկրագոր-
ծութեան եւ արհեստի մէջ կարողացել է ստա-
նալ իւր գոյութիւնն: Այս նախնական վիճակն
պահել է զայն մինչեւ այն ժամանակ, ուր պէտ-
քերն անելով եւ յարաբերութիւններն ընդլայնե-
լով արտաւտաւարութիւնն (թէ քիչ ի քիչ) մտել
է այդ ժողովրդեան մէջ, Ապա արտաւտաւար-

ութիւնն աստիճանաբար նորա մէջ զարգանալով
ընդունակ գտնվել է ի վերջէ ըմբռնելու մասնա-
գիտաց խորհուրդներն, եւ հետզհետեւ գիտութիւնը
եւ յառաջանալով, հասել է վերջապէս նոյն չը-
նորհիւ այժմեան կատարելութեան. ուսմանը,
ընդհանուր առմամբ, աստիճանաբար մեծ գտած
է որքան աշխատաւորի բնակարանին մէջ, եւ սա
գիւղացիին համար միշտ մի բարոյական պահանջ
է նկատուել, քան թէ յառաջացման անհրա-
ժեշտ մի պայման: Եւրոպայի մշակն եւ գործա-
ւորն նախ պարզ ընկերայնութեան եւ ապա ուս-
ման պարագայեցուցել են, երբ արդէն արտաւտա-
վարական մասին մէջ ըստ բաւականի կրթեալ
գտած են զայն: Նոյն իսկ Ֆրանսան, որ այս-
պիսի հարցերու ժամանակ ուրիշ ազգաց մէջ կը
հաճին իր օրինակ ցոյց տալ, որիչ կերպ չէ
հասել այն կատարելութեան յորում կը փայլի
այժմ: Երբ բարգաւաճեց երեք դարէ ի վեր Ֆրան-
սայի աշխատաւոր մասին նրա իրական յառաջի-
մութիւնն իւր մտաւորական զարգացման հետ,
կը տեսնեմք թէ այս վերջինն նրա իրական յոսկ
օժանդակին լինելով մի եւ նոյն համեմատութեամբ
չէ զարգացած: Այս ժամուս իսկ Ֆրանսայի 30
միլիոն աշխատաւոր մասն մտաւորական զարգա-
ման մասին ուրիշ շատ ժողովուրդներէ յեւ մը-
նացել է եւ սակայն ընդհանուր երկրին բարգա-
ւաճումն հասել է վերին աստիճանին: Պատճառ-
վան զի նա արտաւտաւարական ճիւղին մէջ
յառաջացել է կատարելապէս: Նոյն կարող եմք
ասել եւ Անգլիոյ, Պրուսիայի, Զուիցերլանդի, Հոլան-
տայի եւ Ամերիկայի շատ երկրներու համար: Եւ

